

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ՏՐԱՎԵՐՏԻՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱՎԱԶԴԻ ՕՆԻՔՍԱՆՄԱՆ ՄԱՐՄԱՐԻ,
ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՆԱՎՈՐ ՓՇՐԱՔԱՐԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԲԱՑԱՀԱՆՔԻ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՏՐԱՎԵՐՏԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝

Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևան – 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	-----4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	-----9
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-----10
1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	-----10
1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը	-----12
1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	-----23
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	-----25
2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	-----25
2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	-----26
2.3 Կլիմա	-----39
2.4 Մթնոլորտային օդ	-----45
2.5 Ջրային ռեսուրսներ	-----48
2.6 Հողային ծածկույթ	-----51
2.7 Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ	----55
2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ	- -----59
2.9 Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր	-----63
3.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	-----65
3.1 Արարատի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը	-----65
3.2. Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը	-----68
4.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	-----69
4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը	-----69
4.2. Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները	-----69

5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----	69
5.1 Մթնոլորտային օդ -----	70
5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր -----	70
5.3 Հող -----	70
5.4 Բուսական և կենդանական աշխարհ -----	74
5.5 Պատմամշակութային արժեքներ -----	75
5.6 Սոցիալական ազդեցություն -----	76
5.7 Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան-----	77
5.8. Բնապահպանական մշտադիտարկումների պլան -----	82
Հավելված 1.Բնապահպանական կառավարման պլան և մշտադիտարկումների ծրագիր -----	85
Մշտադիտարկումների տեղադիրքի քարտեզը -----	91

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործունեների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազգակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության

կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տրավերտին» ՍՊ ընկերությունը հանքարդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/233 թույլտվության և ընդերքօգտագործման թիվ ՊՎ 233 պայմանագրի շրջանակներում հանքարդյունահանման աշխատանքներ է իրականացնում ՀՀ Արարատի մարզի Արտավազի օնիքսային մարմարի, տրավերտինների և գունավոր փշրաքարերի հանքավայրում: Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը ավարտվում է 2022թ-ի մարտ ամսին: Ընկերությունը նախատեսում է արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/233 թույլտվության և ընդերքօգտագործման թիվ ՊՎ-233 պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո շարունակել իրականացվող գործունեությունը և ստանալ ՀՀ Արարատի մարզի Արտավազի օնիքսային մարմարի, տրավերտինների և գունավոր փշրաքարերի արդյունահանման նոր թույլտվություն:

Ընկերությունը ունի հանքարդյունահանման ոլորտի բարձրորակ մասնագետներ ու անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, այլ հնարավորություններ և փորձ ընդերքօգտագործման բնագավառում:

Ստանալով ՀՀ Արարատի մարզի Արտավազի օնիքսային մարմարի, տրավերտինների և գունավոր փշրաքարերի հանքավայրի տեղամասի արդյունահանման իրավունք և իրականացնելով այն, ընկերությունը կշարունակի ապահովել շուկայի ավելացող պահանջարկը, կպահպանի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով տարածքշրջանի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հանրապետությունում առկա հարաճուն պահանջարկը բնական քարերից ստացվող երեսպատման սալիկների նկատմամբ, ընկերությունը ցանկանում է իրականացնել 1237271.0մ³ օգտակար հանածոյի արդյունահանում մեկ բացահանքով:

Օգտակար հանածոն տեղափոխվելու է բացահանքի հարևանությամբ գործող քարամշակման արտադրամաս:

Հայցվող տեղամասի շահագործման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները, մոտեցող ավտոճանապարհը և արտադրական հրապարակը:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Բուսական աշխարհի մասին (1999),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),

- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2002),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- 14.08.2008թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումը
- 29.01.2010թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն որոշումը,
- 29.01.2010թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշումը,
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ս արձանագրային որոշում,
- ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային որոշում,
- և ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և

գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին»> N23 արձանագրային որոշումը,

- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք (2014)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 2014թ-ին, սահմանում է նախագծային գործունեության և հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը:

ՇՄԱԳՓ-ը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է: Օրենքում սահմանվում են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցյուններ, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները:

Օրենքն արգելում է, որպեսզի որևէ տնտեսական միավոր գործի կամ որևէ հայեցակարգ, ծրագիր, համալիր սխեմա կամ գլխավոր հատակագիծ իրականացվի առանց ՇՄԱԳՓ դրական եզրակացության:

Բնապահպանության նախարարությունը նույնպես կարող է անհրաժեշտության դեպքում նախաձեռնել շրջակա միջավայրի ազդեցության վերանայում:

ՇՄԱԳՓ մասին օրենքը սահմանում է ծանուցման, փաստաթղթերի պատրաստման, հանրային լուսմների և բողոքարկման կարգը և պահանջները:

ՇՄԱԳՓ մասին օրենքը նույնպես սահմանում է հանրային լսումների ներգրավման և մասնակցության պահանջը:

Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

ՇՄԱԳՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԱՄՆ ՄԶԳ (USAID), ԵԽ (EU), ՀՄԿ (MCC), և այլն) բնապահպանական գնահատման մոտեցումներին:

Սույն Օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱԳՓ բոլոր փուլերին:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 Ընդերքի մասին օրենսգրքով:

Ի կատարումն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի պահանջների ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 30.12.2011թ. N 249-Ն հրամանով հաստատել է “Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատմանը, բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և հանքի փակման ծրագրին ներկայացվող պահանջներ”-ը:

Օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացող բնապահպանական և անվտանգության խնդիրների կարգավորման և դրանց արդյունավետ վերահսկման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է

“Օգտակար հանաճոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը” (10.01.2013 թիվ 22-Ն):

Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Թափոնների մասին օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց

փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994)

- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

Համաձայն այս օրենքի, հանքարդյունահանողը՝ արդյունահանումն, ինչպես նաև թափոնների տեղափոխումն ու ժամանակավոր պահումն իրականացնի նվազագույնի հասցնելով փոշու և այլ մթնոլորտային արտանետումները:

ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին թիվ 967-ն որոշումը (2008)

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է թվով 232 բնության հուշարձանների ցանկը, որոնցից 106-ը դասակարգված են երկրաբանական, 48-ը՝ ջրաերկրաբանական, 40-ը՝ ջրագրական, 17-ը՝ բնապատմական և 21-ը՝ կենսաբանական տիպաբանական խմբերում: Ցանկի կազմման համար հաշվի են առնվել բնության հուշարձանների ընտրության հետևյալ չափանիշները. - բնության կուսական առանձին էտալոնային միավորների /տարածքների/ առկայությունը, - տարածքների գեղագիտական և բնապատկերային առանձնահատուկ գրավչությունը, - էնդեմ, ռելիկտ, հազվագյուտ,

արժեքավոր, վտանգված և անհետացող տեսակների կենսավայրերի առկայությունը, որոնք ընդգրկված չեն պահպանվող տարածքներում, - գենետիկական, տեսակային, կառուցվածքային, արտադրողական և այլ արժեքավոր հատկությունները, - գիտաճանաչողական և ռեկրեացիոն առանձնահատուկ նշանակության տարբեր գոյացությունների առկայությունը:

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշումը

- ՀՀ նոր Կարմիր գրքի պատրաստումը իրականացվել է 2007–2009 թթ-ի ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և այլ գիտական կառույցների մասնագետների կողմից:

Տեսակների վիճակի գնահատումը և կատեգորիաների որոշումը իրականացվել է միջազգային չափորոշիչների հիման վրա՝ Բնության պահպանության միջազգային միության դասակարգիչների կիրառմամբ (IUCN, 2007–2009, տարբերակ 3.1):

ՀՀ Կարմիր գիրքը ներառում է 153 տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից՝ ոսկրային ձկներ (Osteichthyes –7 տեսակ), երկկենցաղներ (Amphibia –2 տեսակ), սողուններ (Reptilia –19 տեսակ), թռչուններ (Aves–96 տեսակ) և կաթնասուններ (Mammalia –29 տեսակ): Ներառված են նաև 155 տեսակի անողնաշար կենդանիներ, այդ թվում՝ 16 տեսակի փորոտանիներ և 139 տեսակի միջատներ:

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշումը

Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը հրատարակվել է 2007–2009 թվականների ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի մասնագետների կողմից: 2010 թվականին հրատարակված Կարմիր գրքում ընդգրկված է 452 բույսերի և 40 սնկերի տեսակների նկարագրություններ և 223 առանձին մտահոգիչ կարգավիճակով բուսատեսակներ: Կարմիր գրքում գրանցված 675 բուսատեսակները ներկայացված են միջազգայնորեն ընդունված 6 կարգավիճակով՝ կրիտիկական վիճակում գտնվող,

վտանգված, խոցելի, վտանգման սպառնացող վիճակին մոտ, տվյալների անբավարարությամբ և քիչ մտահոգող տեսակներ:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

1. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Նախագծի հիմնական դրույթները

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկվել է 1237271.0մ³ օգտակար հանածոյի մարվող պաշար, այդ թվում՝ տրավերտին՝ 1219309.0մ³, օնիքսանման մարմար՝ 17962.0մ³, մակաբացման ապարների ծավալը կազմում է 78242.0մ³:

Պիտանի բլոկների ելքը օգտակար հանածոյի զանգվածից կազմում է՝ տրավերտին՝ 32.2%, օնիքսանման մարմար՝ 31.9%:

Բացահանքի գործողության ժամկետը կազմում է 20 տարի:

Շահագործման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները, մոտեցող ավտոճանապարհը և արտադրական հրապարակը:

Նպատակն է՝ 1237271.0մ³ օգտակար հանածոյի արդյունահանում մեկ բացահանքով:

Մակաբացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 78242.0մ³:

Սույն նախագծով նախատեսվում է բացահանքի շահագործում միակողմանի՝ վերնից-ներքև խորացումով մշակման համակարգով՝ 5մ բարձրության հանքաստիճաններով, 2.5մ ենթաստիճաններով:

Օգտակար հանածոն տեղափոխվելու է բացահանքի հարևանությամբ գործող քարամշակման արտադրամաս:

Արտադրական հրապարակում կոնտեյներային տիպի տնակների տեղադրում:

Տեխնիկական և խմելու ջրի մատակարարումը ավտոցիստեռներով:

Նախագծի կազմը՝

Հատոր 1 - Երկրաբանական, լեռնային և լեռնամեխանիկական մասեր, աշխատանքի պաշտպանության բաժին:

Հատոր 2 – Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն:

Նախագծի կազմման ժամանակ օգտագործվել են՝

- հանքավայրում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվությունը;

- ոչ հանքային շինարարական նյութերի արտադրության ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերը, անվտանգության տեխնիկայի միասնական և շահագործման տեխնիկական կանոնները, այլ նորմեր ու ստանդարտներ:

Բացահանքը կունենա հետևյալ անկյունային կետերի կոորդինատները՝

1. Y =8473420.0 X =4421352.0

2. Y =8473863.1 X =4421628.0

3. Y =8473836.0 X =4421744.2

4. Y =8473365.0 X =4421572.0

S=8.6հա

Կոորդինատային համակարգը՝ ARM WGS-84:

1.1.2 Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, նախատեսվում է տեղամասը մշակել բաց եղանակով, միակողմանի խորացող մշակման համակարգով:

Օգտակար հանածոյի մշակումը կատարվելու է «Виктория» մակնիշի կտրիչաշղթայավոր քարհատ մեքենաներով, որից հետո ստացված բլոկները КрАЗ մակնիշի ավտոմոբիլային կռունկով բարձվում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում քարամշակման արտադրամաս:

Նախագծվող բացահանքի պարամետրերն են՝

- առավելագույն երկարությունը - 522.0մ,
- առավելագույն լայնությունը - 228.0մ,
- մշակման խորությունը - 50.0մ:
- օտարման տարածքը - 8.67հա

Բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկվել է 1237271.0մ³ օգտակար հանածոյի մարվող պաշար, այդ թվում՝ տրավերտին՝ 1219309.0մ³, օնիքսանման մարմար՝ 17962.0մ³, մակաբացման ապարների ծավալը կազմում է 78242.0մ³:

Օգտակար հանածոյի արդյունահանվող ծավալը կազմում է 1117526.0մ³, այդ թվում՝ 1101755.0մ³ տրավերտին, 15771.0մ³ օնիքսանման մարմար:

Օգտակար հանածոյի և մակաբացման ապարների արդյունահանվող ծավալներն ըստ հանքաստիճանների բերված են աղյուսակում.

N	Հորիզոն, մ	Մակաբացման ապարներ մ ³	Օգտակար հանածո, մ ³	
			Տրավերտին	Օնիքսանման մարմար
1.	965	2249.0	4325.0	1670.0
2.	960	12958.0	43538.0	9300.0
3.	955	11625.0	79297.0	4801.0

4.	950	8711.0	110988.0	-
5.	945	10763.0	174458.0	-
6.	940	10505.0	219828.0	-
7.	935	13530.0	211638.0	-
8.	930	7901.0	198513.0	-
9.	925	-	59170.0	-
Ընդամենը		78242.0	1101755.0	15771.0

Մակաբացման միջին գործակիցը կազմում է՝ $K_{\text{մ}} = 78242 : 1117526 = 0.07\text{մ}^3/\text{մ}^3$:

1.1.3. Օգտակար հանածոյի նախագծային կորուստները

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում բացահանքում տեղ են գտել հետևյալ կորուստները՝

1. Կորուստներ, որոնք կախված են հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են 119745.0մ^3 կամ 9.68% :

2. Շահագործական կորուստներ, որոնք պայմանավորված են արդյունահանման տեխնոլոգիաներով, կազմում են 0.5% և հաշվարկներում չեն ներառվում:

Ընդհանուր բացահանքային կորուստները կազմում են 119745.0մ^3 կամ 9.68% :

1.1.4. Բացահանքի արտադրողականությունը, աշխատանքի ռեժիմը և ծառայման ժամկետը

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է՝

- ըստ մարվող ծավալի՝ 61864.0մ^3 ,

- ըստ արդյունահանվող ծավալի՝ 55876.0մ^3 :

Պիտանի բլոկների ելքը օգտակար հանածոյի զանգվածից կազմում է՝ տրավերտինի համար՝ 32.2% , օնիքսանման մարմարի համար՝ 31.9% :

Նախատեսվում է բացահանքում լեռնային աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով:

Աշխատանքային օրերի թիվը տարում ընդունվում է 260 օր, օրական մեկ՝ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով: Հաշվի առնելով, որ բացահանքից արդյունահանվող հիմնական օգտակար հանածոն տրավերտինն է, ներկայացվում է տրավերտինի արդյունահանման ցուցանիշները:

Բացահանքի տարեկան և հերթափոխային արտադրողականության ցուցանիշները բերվում է աղյուսակում՝

Անվանումը	Չափ. միավորը	Տարեկան	Հերթափոխային
Օգտակար հանածո, այդ թվում՝		55876.0	254.0
Բլոկներ	մ ³	17992.0	81.8
Արտադրական թափոն		37884.0	172.2
Մակաբացման ապարներ	մ ³	3911.3	15.04
Լեռնային զանգված	մ ³	18200.1	269.04

Մակաբացման ապարների ծավալների հաշվարկների համար օգտագործվել է 0.07մ³/մ³ մակաբացման գործակիցը:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

1.1.5. Լեռնակապիտալ աշխատանքները

Բացահանքն արտադրական հզորության հասնելու համար անհրաժեշտ հանքաստիճանները բացված են: Լեռնակապիտալ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը բացակայում է:

1.1.6. Բացահանքի բացումը

Բացահանքի աշխատանքային հորիզոնների (հանքաստիճաններ) բացումը կատարվում է մուտքային ավտոճանապարհից (որը կապում է բացահանքը լցակայանի և արտադրական հրապարակի հետ) բացող կիսախրամների անցումով:

Բացող կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 14.0մ:

Խրամների անցումն իրականացվում է ներհատ ավտոինքնաթափ-ամբարձիչ-բուլդոզեր լեռնահանքային համալիրով՝ օգտակար հանածոյի նախնական կտրտումով, մասնատումով:


1.1.7. Մշակման համակարգը

Հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել ընդերկայնական միակողմանի խորացման համակարգով:

Ընդունված համակարգի պարամետրերն են՝

- Մարված հանքաստիճանի բարձրությունը՝ 5մ
- աստիճանի թեքման անկյունը՝
- աշխատանքային – 90°
- վերջնական դիրքում - 75° ,
- բացահանքի կողի թեքման անկյունը – 60°
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 2.0մ
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը – 20մ:

Բացահանքի գլխավոր հատակագիծը



Անվանացանկ.

I բացահանք

II Արտադրական հրապարակ

III Ավտոճանապարհ

IV Մակաբացման ապարների արտաքին լցակույտ:

1.1.8. Մակաբացման աշխատանքներ և լցակույտաառաջացում

Նախագծվող բացահանքի սահմաններում օգտակար հանածոյի հաստաշերտը ծածկող մակաբացման ապարները ներկայացված են այլուվիալ-դելյուվիալ նստվածքներով և ներկայացվում են կավաավազներով, կոպտահատիկ ավազներով, ներառած մանր խիճ, կրաքար, ավազաքար, մերգել: Մակաբացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 78242.0մ³: Հողաբուսական շերտը փաստացի բացակայում է, որպես հնարավոր հողաբուսականի շերտ ընդունվում է ժամանակակից նստվածքների վերին շերտը, որի ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 8493.0մ³: Բացի մակաբացման ապարներից, տրավերտինների արդյունահանման ընթացքում առաջանալու են նաև արտադրական թափոններ՝ 746990.0մ³ ծավալով: Այսպիսով, լցակույտային ապարների հնարավոր ծավալը կկազմի՝ 825232.0մ³, այդ թվում՝ 78242.0մ³ մակաբացման ապար, 746990.0մ³ արտադրական թափոն: Տրավերտինի արտադրական թափոնները հանդիսանում են ցեմենտի կամ կրի արտադրության հումք և նախատեսվում է դրանց հետագա, շահագործման աշխատանքներին զուգահեռ օգտագործումը, ուստի լցակույտի վերջնական դիրքում լինելու են միայն մակաբացման ապարներ՝ ներառյալ պոտենցիալ հողաբուսական շերտը:

Մակաբացման ապարները հեռացվում են հանքաստիճանների շահագործմանը զուգահեռ, դրանք բուլդոզերով մշակվում ու տեղափոխվում են մինչև 15-20մ հեռավորության վրա: Այնուհետև կուտակված ապարները ամբարձիչով բարձվում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում բացահանքի հարավային կողմ և պահեստավորվում արտաքին լցակույտերում, շահագործման սկզբնական շրջանում՝ արտադրական թափոնների հետ միասին: Հնարավոր

հողաբուսական շերտը պահեստավորվում է առանձին, մակաբացման ապարների լցակույտի հարևանությամբ:

Հաշվի առնելով հերթափոխի ընթացքում առաջացող մակաբացման ապարների (15.04մ³) ծավալը՝ ապարների տեղափոխումը դեպի լցակույտ կատարվելու է ըստ անհրաժեշտության, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ:

Մակաբացման ապարների ծավալը լցակույտում, հաշվի առնելով մնացորդային 1.1 փխրեցման գործակիցը, կկազմի՝ 86066.0մ³:

Արտաքին լցակույտի հիմքի մակերեսը կազմում է 18465.0մ², շեպի թեքման անկյունը՝ 33-35°:

Լցակույտառաջացումը իրականացվելու է բուլդոզերի օգնությամբ: Լցակույտում նախ պահեստավորվում են այլովիալ-դելյովիալ նստվածքներն, որից հետո ժամանակակից առաջացումները:

Ռեկուլտիվացիայի է ենթարկվում միայն լցակույտի մակերևույթը՝ 1.35հա մակերեսով: Բացահանքի հատակի ռեկուլտիվացիա չի նախատեսվում՝ գունավոր փշրաքարերի հաստատված պաշարների առկայության պատճառով:

1.1.9. Արդյունահանման աշխատանքները

Հանքավայրում օգտակար հանածոներից՝ տրավերտինների և օնիքսանման մարմարի արդյունահանման աշխատանքները նմանատիպ են և ընդգրկում են միևնույն տեխնոլոգիական գործընթացները:

Բլոկների արդյունահանումը օգտակար հանածոյի զանգվածից ընդգրկում է հետևյալ արտադրական գործողությունները.

- Միաքարի առանձնացումը զանգվածից:
- Միքարի հեռացնելը հանքախորշից:
- Միաքարի մասնատումը ապրանքային բլոկների:
- Բլոկների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:
- Արտադրական թափոնների հեռացումը:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հասկոթոյունները կանխորոշում են տրավերտինի արդյունահանումն իրականացնել կտրիչա-շղթայավոր քարհատ մեքենաներով:

Տրավերտինի առանձնացումը զանգվածից կատարվում է «Виктория» և «Надежда» մակնիշի քարհատ մեքենաներով, հորիզոնական և ուղղաձիգ հատումներով:

Ներհատ մեքենայի ժամային արտադրողականութոյունը կազմում է.

$$S_{\text{ժամ}} = 8.5 \text{մ}^2/\text{ժամ}$$

Ներհատ մեքենայի հերթափոխային արտադրողականութոյունը 8-ժամյա հերթափոխի համար կկազմի.

$$S_{\text{հերթ}} = 8 \times 0.9 \times 8.5 = 61.2 \text{մ}^2/\text{հերթ}$$

Որտեղ՝ 0.9 – ժամանակի օգտագործման գործակիցն է հերթափոխում:

Ներհատ մեքենայի տարեկան արտադրողականութոյունը կկազմի.

$$S_{\text{տ}} = 260 \times 0.95 \times 61.2 = 15116.4 \text{մ}^2$$

Որտեղ՝ 0.95 – գործակից է, որը հաշվի է առնում ներհատ մեքենայի պլանա-արտադրական վերանորոգումները տարվա ընթացքում:

Ներհատ մեքենայի կողմից տրավերտինի անջատման համար հատման մակերեսի տեսակարար ծախսը հաշվարկված է.

$$q_{\text{մ}} = 1.6 \text{մ}^2/\text{մ}^3:$$

Հատված տրավերտինի միաքարի հեռացումը հանքախորշից մինչև մասնատման վայր, 10-15մ հեռավորութոյան վրա, կատարվում է բուլդոզերով:

Հաշվի առնելով բուլդոզերի հերթափոխային արտադրողականութոյունը միաքարի հեռացման ընթացքում (90.0մ³), ընդունվում է 1 բուլդոզեր:

Տրավերտինի հետագա մասնատումը 1x1x0.5մ չափերի բլոկների նույնպէս կատարվելու է «Виктория» և «Надежда» մակնիշի կտրիչա-շղթայավոր քարհատ մեքենաներով:

Միաքարը բլոկների բաժանելու համար հատված մակերեսի տեսակավորվող ծախսը 1.0մ³ ծավալով միաքարի վրա հաշվարկված է $q_{\text{բ}} = 0.8 \text{մ}^2/\text{մ}^3$:

«Виктория» մակնիշի ներհատ մեքենայի տարեկան արտադրողականութոյունն ըստ տրավերտինի զանգվածի կազմում է.

$$V_{տար} = S_{տարի} : (q_{մ} + q_{բ}) = 15116.4 : (1.6 + 0.8) = 6298.5 \text{մ}^3$$

«Виктория» և «Надежда», մակնիշի կտրիչա-շղթայավոր ներհատ մեքենաների անհրաժեշտ քանակը կկազմի.

$$N = 55876 : 6298.5 = 9 \text{ հատ:}$$

Աշխատանքների համար ընդունվում է 9 հատ քարհատ մեքենա:

Բլոկների բարձումը

Բլոկների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ կատարվում է KpA3 մակնիշի ավտոմոբիլային կռունկով:

Ավտոմոբիլային կռունկի հերթափոխային արտադրողականությունը ըստ ՆՏՆ-ի ընդունված է $85 \text{մ}^3/\text{հերթ}$:

Բարձման աշխատանքների համար ընդունվում է 1 ավտոկռունկ:

Արտադրական թափոնների հեռացումը

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները բուլդոզերի միջոցով կուտակվում են աշխատանքային հորիզոնում, այնուհետև բարձիչով բարձվում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում բացահանքում ձևավորված արտաքին լցակույտ:

1.1.10 Հանութաբարձման աշխատանքներ

Տրավերտինի բլոկների արտադրության ժամանակ առաջացող արտադրական թափոնների բարձման համար օգտագործվելու է DNEPR մակնիշի ամբարձիչը:

Արտադրական թափոնները մինչև արտաքին լցակույտ տեղափոխվելու են KAMAZ 5511 կամ KRAZ 250 մակնիշի ավտոինքնաթափերով:

Ամբարձիչի տարեկան արտադրողականությունը հանութաբարձման աշխատանքների ժամանակ որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{տ} = Q_{հ} \times N_{տ} \times K_{տ} \times K_{է}, \text{մ}^3$$

որտեղ՝ $Q_{հ}$ – ամբարձիչի հերթափոխային արտադրողականությունն է՝

$$(T - T_{սախ} - T_{կ}) Q_2 n_2$$

$$Q_h = \frac{\quad}{T_w + T_u}, \text{ m}^3/\text{հերթ}$$

որտեղ՝

T -հերթափոխի տևողությունն է, 480 րոպե

T_u ախ – նախապատրաստական-ավարտական օպերացիաների ժամանակն է, 35րոպե

T_l – անձնական կարիքների համար օգտագործվող ժամանակն է, 10րոպե

Q_2 - շերտի մեջ ապարի զանգվածն է, 0.96մ³

n_2 - բարձվող շերտիների քանակն է ավտոինքնաթափի թափքի մեջ, 7

T_w - ավտոինքնաթափի բարձման տևողությունն է, 4րոպե

T_u - ավտոինքնաթափը բարձման տակ տեղադրելու տևողությունն է,

0.6րոպե

N_u – տարվա ընթացքում աշխատանքային հերթափոխների թիվն է,

$N_u=260$

K_u - գործակից է, որը հաշվի է առնում ամբարձիչի անհրաժեշտ պլանա-արտադրական վերանորոգումները, $K_u = 0.85$

K_t – գործակից է, որը հաշվի է առնում ամբարենպաստ եղանակի պայմանները տարում $K_t = 0.9$

այսպիսով՝

$$Q_h = \frac{(480 - 35 - 10) \times 0.96 \times 7}{(4 + 0.6)} = 635 \text{ m}^3$$

$$Q_u = 635 \times 260 \times 0.85 \times 0.9 = 126300 \text{ m}^3$$

Ընդունվում է 1 հատ ամբարձիչ:

1.1.11. Ապարների տեղափոխումը

Տրավերտինի տեղափոխումը բացահանքից դեպի արտադրամաս և լցակույտեր կատարվելու են ընկերության ավտոինքնաթափերով: Արտադրամասի միջին հեռավորությունը բացահանքից կազմում է 0.6կմ, լցակույտը գտնվում է բացահանքից միջինը 0.3կմ հեռավորության վրա: Տրավերտինները և մակաբացման ապարները նախատեսվում է տեղափոխել KAMAZ կամ KRAZ մակնիշի ավտոինքնաթափերով:

Անհրաժեշտ բեռնաթափերի հաշվարկի համար ելակետային տվյալներն են՝

• հերթափոխում տեղափոխվող ապարների ծավալը՝

- տրավերտի բլոկ՝ $81.8\text{մ}^3/\text{հերթ}$,

- մակաբացման ապարներ և արտադրական թափոններ՝ $187.24\text{մ}^3/\text{հերթ}$,

• տեղափոխման միջին հեռավորությունը՝ 0.6կմ և 0.3կմ ,

• բարձրագույն ավտոինքնաթափերի շարժման միջինացված արագությունը՝ 25կմ/ժամ

• դաստարկ ավտոինքնաթափերի շարժման միջինացված արագությունը՝ 40կմ/ժամ

Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = \frac{V \times K_{\sigma} \times T_h \times K_l}{T_{\text{ն}}}$$

Որտեղ,

T_h – հերթափոխի տևողությունն է, $T=480$ րոպե;

V – ավտոինքնաթափի թափքի մեջ գտնվող ապարի ծավալն է;

K_{σ} – ժամանակի օգտագործման գործակիցն է 1 հերթափոխի ընթացքում, 0.85 ;

K_l – լցման գործակիցն է ըստ լեռնային զանգվածի, $K_l= 0.9$;

$T_{\text{ն}}$ – ավտոինքնաթափերի մեկ ուղերթի տևողությունն է.

$$T_{\text{ն}} = \frac{2L \times 60}{V_{\text{միջ}}} + t_p + t_{\eta} + t_{\text{մ}}$$

որտեղ՝

L - բեռնատեղափոխման միջին հեռավորությունն է, կմ;

t_p - ավտոինքնաթափերի բարձրագույն տևողությունն է, րոպե

t_{η} - ավտոինքնաթափերի բեռնաթափման տևողությունն է,

րոպե

$t_{\text{մ}}$ - ավտոինքնաթափերի մանյովրների տևողությունն է, րոպե

t_2 - ավտոինքնաթափերի շարժման տևողությունն է, րոպե

$V_{\text{միջ}}$ - ավտոինքնաթափերի միջին երթային արագությունն է,

կմ/ժամ:

Ինքնաթափերի քանակը հերթափոխի ընթացքում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$N_p = \frac{Q_h \times K_{\phi}}{Q}$$

որտեղ՝

Q_h - բացահանքի հերթափոխային արտադրողականությունն է;

K_{ϕ} - փխրեցման գործակիցն է, հանույթի ժամանակ;

Q –ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունն է:

Տրանսպորտային աշխատանքների պարամետրերը բերված են աղյուսակում:

h/h	Ցուցանիշների անվանումը	Չափ. միավ.	Ծավալները, մ ³	
1	Տեղափոխվող բեռների ծավալը	մ ³ /հերթ	81.8	187.24
2	Տեղափոխման միջին հեռավորությունը	կմ	0.6	0.3
3	Ավտոինքնաթափի միջին ուղերթային արագությունը	կմ/ժամ	25	25
4	Ավտոինքնաթափի բարձրագույն տևողությունը	րոպե	2.5	2.5
5	Ավտոինքնաթափի բեռնաթափման տևողությունը	րոպե	8	1
6	Մանյուվրների և սպասումների տևողությունը	րոպե	3	3
7	Մեկ երթի տևողությունը	րոպե	20	10
8	Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը	մ ³	440.0	
9	Անհրաժեշտ ավտոինքնաթափերի թիվը	հատ	1	1

1.1.12. Բուլդոզերի աշխատանքներ

Բուլդոզերի աշխատանքները հանքավայրի շահագործման ընթացքում կայանում են մակաբացման ապարների, հանքախորշից տրավերտինների բլոկների հեռացման, լցակույտային աշխատանքների մեջ, ինչպես նաև կարող է օգտագործվել հանքաստիճանների, աշխատանքային հրապարակների, ճանապարհների մաքրման և այլ աշխատանքների համար:

Ընդունվում է մեկ բուլդոզեր:

1.1.13 . Բացահանքի ջրամատակարարումը և ջրհեռացումը

Բացահանքի ջրամատակարարումը կայանում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Ջուրը բերվում է ջրցան-վացող ավտոմեքենայով:

Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ջրի ցիստեռնով:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n1 \times N1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ աշխատողների թիվն է - 4

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

$n1$ - բանվորների թիվն է - 18,

$N1$ - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (4 \times 0.016 + 18 \times 0.025) \times 260 = 122.64$ մ³/տարի, միջին օրեկան 0.52մ³:

Կենցաղային կեղտաջրերը՝ $0.52 \times 0.85 = 0.44$ մ³ օրեկան լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ² տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ²:

Փոշենստեցման մակերեսները կազմում են՝ աշխատանքային հրապարակը՝ 200մ², լցակույտի վրա՝ 1500մ² և ավտոճանապարհների վրա՝ 1800մ², ընդամենը 3500մ²:

Տարեկան և շոգ եղանակներով օրերի քանակը կազմում է 100օր, ջրելու հաճախականությունը օրվա ընթացքում ընդունված է 3 անգամ:

Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ², կստանանք

$$Q_{\text{տ}} = 100 \times 3 \times 0.5 \times 3500 = 525.0$$
մ³:

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա, որը այդ ջուրը ցնցուղում է տաք և չոր եղանակներին, օրը 3 անգամ:

Բացահանքի և լցակույտի տարածքներում հատուկ ջրհեռացնող միջոցառումներ չեն նախատեսվում: Գրունտային ջրերը բացահանքի տարածքում բացակայում են, իսկ անձրևաջրերը կհեռանան ներծծման և բնական գոլորշիացման եղանակով:

Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է ինքնահոս կերպով:

1.1.13. Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան

Արտադրական կուլտուրայի բարձրացումը և սանիտարահիգիենիկ բարենպաստ պայմանների ապահովումը համարվում են արտադրողականության բարձրացման կարևոր գործոնները:

Այդ նպատակով նախատեսվում է՝

- Մեքենաների և մեխանիզմների պարբերաբար ներկումը աչքի համար հանգիստ գույնով;
- Չոր եղանակների դեպքում ճանապարհների հաճախակի ջրումը,
- Հեղուկ վառելիքով աշխատող սարքավորումների վրա արտաթորված գազերի չեզոքիչների տեղադրում;
- Անբարենպաստ եղանակներին բանվորների պատասպարվելու և հանգստի համար նախատեսվում է բեռնարկղային տիպի տնակ:

Բանվորների սպասարկելու համար նախատեսվում է ինվենտարային կենցաղային տնակ և երկտեղանի արտաքնոց:

Աշխատողներին խմելու ջրով մատակարարելու համար նախատեսվում է ցիստեռն:

Բոլոր մեքենաները պարտադիր ապահովվում են առաջին օգնության դեղատուփերով:

Աշխատանքի անվտանգության ապահովվման համար լեռնային աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) և հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններին (ՇՏԿ) համաձայն: Հատկապես պետք է հետևել աշխատանքի անվտանգությանը մշակված տարածքների մոտ աշխատելիս, մեքենաները չմոտենան դրանց 3-4մ-ից ոչ պակաս և կանգնեն ընթացքային մասով (անիվային, թրթուրային) եզրին ուղղահայաց:

1.2. Նախագծի այլընտրանքը

Նախագծվող բացահանքը գտնվում է բնակավայրերից հեռու, ջրագուրկ վայրում, ինչը բացառում է էկոլոգիական և սոցիալական հնարավոր վտանգները:

Բացառվում է ջրային ավազանի աղտոտումը:

Փոշու քանակի նվազեցմանը նպաստելու է նաև պայթեցման աշխատանքների բացառումը, երբ տրավերտինի արդյունահանումը կատարվելու է միայն քարհատ մեքենաների կիրառմամբ:

Նախագծով նախատեսվում է նաև տարվա շոգ եղանակներին հնարավոր փոշեառաջացման օջախների ջրումը:

Հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություն ունենալ չի կարող:

Բացահանքի շահագործումը կթուլացնի սոցիալական լարվածությունը, քանի որ աշխատողների հիմնական մասը ընդգրկվելու է մոտակա համայնքներից, երբ մարդիկ հնարավորություն կունենան աշխատանքի դիմաց ստանալ միջինից բարձր աշխատավարձ:

Անուշադրության չի մատնվելու նաև ազդակիր համայնքը, որի հոգսերի մի մասը իր վրա կվերցնի ընկերությունը:

Որպես այլընտրանք կարելի է ընդունել գրոյական տարբերակը, երբ հանքավայրը չի շահագործվում, սակայն այն լավագույնը չէ, նման տարբերակը ոչինչ չի տալիս ազդակիր համայնքին:

Նախագիծը չունի այլընտրանք, չունենալով էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, այն նկատելի դրական ազդեցություն կունենա ազդակիր համայնքի սոցիալական կյանքում:

1.3 Սոցիալական ազդեցության գնահատականը

Բացահանքը գտնվում է Դաշտաքար բնակավայրի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը:

Հանքավայրի շահագործման կամ բացահանքի փակման արդյունքում բնակչության տարահանման խնդիր չի առաջանա:

Բացահանքի աշխատանքներին մասնակցություն կունենա 22 մարդ:

Ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների նախնական չափը և ժամկետները՝

h/h	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ.դրամ
1.	Սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքային օգնություն	Յուրաքանչյուր տարի	150.0
2.	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	150.0
3.	Մանկապարտեզի, դպրոցի վերանորոգման աշխատանքներին ֆինանսական մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	200.0
4.	Դպրոցին անհրաժեշտ գրենական պիտույքների տրամադրում	Յուրաքանչյուր տարի	100.0


Ընկերությանը իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության


ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

2.1 ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ և ԼԱՆԴՇԱՖՏԸ

Արարատի օնիքսանման մարմարի, տրավերտինի և գունավոր բրեկչիայի հանքավայրի «Տրավերտին» ՍՊԸ-ի բացահանքը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Վեդի քաղաքից մոտ 2կմ հյուսիս-արևմուտք: Ազդակիր բնակավայրը Դաշտաքար գյուղն է, որը գտնվում է մոտ 5կմ դեպի արևելք: Տեղամասը ջրագուրկ է և զերծ հողաբուսական ծածկոցից :





Հայցվող տեղամասի տեղադիրքը: Հատված 1:25000 մասշտաբի քարտեզից:



Հատված Google Eart քարտեզից, մոտակա բնակավայրերից հեռավորությունների նշագրմամբ:

Հայցվող տարածքը վարչատարածքային բաժանման տեսակետից ներառված է Դաշտաքար համայնքում: Տեղամասի հողերը գյուղատնտեսական նշանակության են, հողատեսքը՝ արոտավայր:

Արարատի մարզի հարավ-արևմտյան եզրին գուրգահեռ 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը:

Հյուսիսում Երանոսի լեռնաշղթան է: Հյուսիսային սահմանն անցնում է Ազատ և դրա վտակ Գողթ գետերով:

Հյուսիս-արևելքում Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնագանգվածներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Մպիտակասար լեռնագագաթն է՝ 3555.7մ:


Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:

Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ազատը, Վեդին: Համեմատաբար փոքր գետերից են Արածոն, Չորասուհեղեղատարը, Ազատի ու Վեդիի վտակները՝ Քաջառուն (Դարբանդ), Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ազատի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Զովաշենի ջրամբարը և համանուն ՀԷԿ-ը:

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին):






Հանքավայրը տեղադրված է Արաքս գետի հարթավայրի ցածրադիր ռելիեֆի վրա բարձրացող բարձունքի լանջերի վրա, և միայն արևելքից և հյուսիս-արևելքից սահմանափակվում է Ուրցի լեռնաշղթայի բարձր լեռնաձյուղով:

ՌԵԼԻԵՖԻ ՉԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՉԵՎԵՐ





ՏԻՊԵՐ




Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ)

-  Չառիքափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
-  Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
-  Չափավոր զառիքափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով
-  Ուռուցիկ լանջերով գմբեթաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով
-  Մնացուկային բարձունքներ՝ ձորակներով թույլ մասնատված



Ցածրլեռնային գոտի (մինչև 1 500 մ)

-  Մեղմաքեք, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով
-  Խիստ մասնատված, հաճախ անհամաչափ լանջերով (կուեստներ) լերկուտներ (Bad lands)

Վահանաչի բարձրադիր լեռներ (2 800 մ և բարձր)




-  Թույլ մասնատված, մեղմաքեք աստիճանակերպ լանջեր
-  Աստիճանակերպ լանջեր, մասնատված U-աձև հովիտներով
-  Մեղմաքեք, բլրավետ լանջեր, մասնատված V-աձև հովիտներով


Սարահարթեր և սարավանդներ


-  Մերձգագարային, հորիզոնականին մոտ, թույլ քեք մասամբ բլրավետ
-  Ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված

Լեռնային հարթություններ





Միջին բարձրություն (1 500-2 500 մ)


-  ա) հորիզոնականին մոտ
-  բ) քեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ)
-  Հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, թույլ ալիքավոր (1 500-2 500 մ)

-  Նախալեռնային շլեյֆ՝ ա) 2 100-2 300 մ, բ) մինչև 1 500 մ


-  Թեք, դարավանդավորված (1 200-2 100 մ)

Ցածրադիր (մինչև 1 500 մ)


-  Թեք, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500 մ)
-  Նախալեռնային, հորիզոնականին մոտ (250-800 մ)
-  Ալիքավոր, դարավանդավորված
-  Դարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով




ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՂ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Սողանքներ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Մոտակա սողանքայի մարմինը հայցվող տեղամասից գտնվում է առնվազն 6-7կմ դեպի արևմուտք:

2.2. ԿԼԻՄԱ ԵՎ ՄԹՆՈԼՈԴՐԱՅԻՆ ՕԴ

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության:

Մասնավորապես այս մարզում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

- չոր խիստ ցամաքային
- չոր ցամաքային
- չափավոր ցամաքային
- բարեխառն
- ցուրտ լեռնային
- ձյունամերձ

Արարատի մարզում տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր և բարձր լեռնային շրջանների միջև տատանվում է $+10^{\circ}\text{C}$ -ի և -2°C -ի միջև:

Ձմռանն անհողմ եղանակի պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում:

Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է 15°C -ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը:

Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները:

Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Քամիների միջին տարեկան արագությունը կազմում է 2.3մ/վրկ, քամու առավելագույն արագությունը ապրիլ ամսին 3.2մ/վրկ է: Անհողմությունները կազմում են 29%:

Մարզի հարթավայրային շրջանների համար բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը:

Հունվարյան միջին ջերմաստիճանն է այդ շրջաններում համապատասխանաբար -6°C և -12°C , հուլիսյան ջերմաստիճանը՝ $+26^{\circ}\text{C}$ և $+8^{\circ}\text{C}$, միջին տարեկան տեղումները՝ 200մմ և 1000մմ: Ցածրադիր շրջաններում դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են -33°C և $+42^{\circ}\text{C}$, ընդ որում վերջինս Հայկական լեռնաշխարհում դիտարկված բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է և այն գրանցվել է Արարատյան հարթավայրի հարավ-արևելքում:

Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. $^{\circ}\text{C}$												Միջին տար. $^{\circ}\text{C}$	Բաց. նվազ. $^{\circ}\text{C}$	Բաց. առավ. $^{\circ}\text{C}$
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ.	միջին ամսական												Ձնածածկույթ			
	Տեղումների քանակը _____, մմ															
կայանի անվանումը	ըստ ամիսների.												Տարկան	Առավ տասնօրյա բարձ-ը, սմ	Տարվա ձն ածածկույթ ով օրերի քան-ը	Չյան մեջ ջրի առավե- լագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
	Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21				
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37			

Արևափայլի տևողությունը

Բնակ-ի, օդկայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ													Տար գումար
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգո	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
Արարատ	123	147	175	168	312	357	422	378	334	263	175	114	2968	

Անարև օրերի քանակը

Բնակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների													Տար-ն
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ		
Արարատ	9	6	3	2	1						1	2	8	32

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բն-ի, ակնական անվ-ը	Օդի ջերմաստիճանը, 0C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %			Մթն տեղ. և գրունտի սառչման խորությունը			Քամի			
	ամենացուրտ օրվա		ամենացուրտ օրվա հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը		բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը		Տևողությունը, ամսական	միջին ամսական	միջին ժամը	Տեղ. քան-նայ-մարտ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղ-ը դեկտեմբերին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին մ/վ	
	ապահով, %							Միջին ջեր-ը ժամ-ի միջ օր ջերմ-ով՝ ոչ բարձր, °C	0	8	10					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	-24	-21	-21	-17	-3.5	-32	9.0	66	136	153	78	66	96	37	ՀվԱրլ	2.7
								-2.3	-0.9	-1.9						

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				Ամենատաք ամսվա հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ		
	Ապահովվածությունը, %		բացարձակ	ամենատաք	ամենատաք	միջին ամսական	միջին ամսական	Տեղումների քանակ	Տեղումների օրական	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից ամենամեծը
	0,95	0,99	առավելագույնը	ամսվա միջին առավելագույնը	ամսվա միջին օրական տատանումը	կան	կան	ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	առավելագույն քանակը	ոգոստոս ամիսներին	ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արարատ	33	34	42	33.5	14.2	45	29	135	37	Հս	2.6


Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակար-դակից, մ	Կլիմայական բնութագիր
3	Ցուրտ (Ց) Լեռնային շրջաններ՝ Ապարան, Գավառ, Մարտունի, Ֆանտան, Հրազդան, Սևան, Միսիան, Թալին և այլն	1600 -ից ավելի	Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ


ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:


2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան գերազանցել է հիմնականում Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան և Արարատ քաղաքներում: Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:






2021 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն Վանաձոր քաղաքում՝ աննշան, իսկ մնացած քաղաքներում ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 4-րդ եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Հանքի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ բացակայում են գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին են դասվում Դաշտաքար համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Աղմուկի մակարդակ

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող ներմերի):

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով սահմանափակել գիշերային աշխատանքը հանքավայրի տարածքում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից:

2.3 ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանքավայրի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերևից ներքև ներկայացվում է հետևյալ տեսքով.

- ա) այլուվիալ-դելյուվիալ նստվածքներ – ժամանակակից նստվածքներ,
- բ) ժամանակակից տրավերտին,
- գ) օնիքսանման մարմար – վերին չորրորդական,
- դ) ազլումերատիվ տուֆ – ներքին չորրորդական,
- ե) տրավերտին – նեոգեն,
- զ) գորշ-դեղնավուն կավեր – կարբոնատային կազմի – նեոգեն,
- է) գունավոր փշրաքարեր – նեոգոն,
- ը) կավեր, կավային ավազաքարեր գորշ-դեղնավուն- կարբոնատային կազմի,
- թ) գիպսատար կավեր և ավազաքարեր – վերին օլիգոցենի:

Այլուվիալ-դելյուվիալ նստվածքները զարգացած են հիմնականում հանքավայրի հյուսիսային և հարավային մասերում: Ներկայացված են կավաավազներով, կոպտահատիկ ավազներով, ներառած մանր խիճ, կրաքար, ավազաքար, մերգել մինչև 20մ և ավել հզորությամբ: Պաշարների հաշվարկման մակերեսում դրանց հզորությունը չի անցնում 2մ:

Ժամանակակից տրավերտին – հանդիսանում է երիտասարդ առաջացումներից մեկը: Կազմվում է Աղիաղբյուր աղբյուրի մոտ և ներկայումս առաջացնում է գմբեթաձև ելուստներ կապված տեկտոնական խախտումների հետ, կամ կախված ռելիեֆային պայմաններից, առաջացնում է 0.5-1.5մ հզորությամբ ծածկույթներ: Սովորաբար դա ծակոտկեն է, ցանցային կառուցվածքով, կոպտահատիկավոր: Հաճախ դրանց մեջ հանդիպում են կրաքարային ապարների և ավազաքարերի բեկորներ:

Օնիքսանման մարմարը հանդիպում է երակների և հանքակուտակների ձևով, որոնք տարածական հարում են տեկտոնական խզվածքներին: Ընդ որում երակները

տեղակայվում են կամ անմիջապես խզվածքում կամ մերձխզվածքային մասում:
Հանքակուտակները հարում են բացառապես խզվածքի պարկած կողին:

Երակաձև մարմինները սովորաբար փոքր հզորության են, չեն պահպանվում ըստ անկման և տարածման

Օնիքսանման մարմարների կուտակները հայտնաբերվել են հանքավայրում խզվածքների երկարությամբ (հյուսիսային, հարավային և արևելյան):

Օնիքսանման մարմարի հյուսիսային կուտակը նեղ շերտով (20-ից-100մ լայնությամբ) փոքր ընդմիջումներով հետապնդվում է զառիթափ լանջով, հյուսիսային խզվածքի երկայնքով 1.2-1.3կմ երկարությամբ: Հյուսիսում դա սահմանափակվում է տեկտոնական խզվածքով, իսկ հարավում կուտակի հզորությունը աստիճանաբար փոքրանում է և սեպվում է ինչպես անկմամբ, այնպես էլ տարածմամբ: Կուտակի հզորությունը տատանվում է 1.3-ից 18.0մ:

Հարավային խզվածքի սահմաններում, դրա պարկած կողում հայտնաբերվել են օնիքսանման մարմարի մոտ 10 ելքեր: Դրանց մի մասը՝ կապված խզվածքի արևմտյան մասին, ներկայացված են սակավաթեք, փոքր չափերի շերտերով (8x3մ մակերեսով, 0.5-0.7մ հզորությամբ):

Խզվածքի արևելյան մասում օնիքսանման մարմարի խոշոր կուտակներ, տեղակայված մերձակերևութային մասերում, չեն հայտնաբերվել:

Արևելյան կուտակը հետապնդվում է արևելյան խզվածքի երկայնքով: Օնիքսանման մարմարը կազմում է ոսպնյակաձև մարմին, որը 7-8մ լայնությամբ հետապնդվում է անընդհատ խզվածքի պարկած կողի երկայնքով 250մ: Այստեղ դա տեղակայված է անմիջապես գունավոր բրեկչիայի հաստաշերտի վրա, 0.5-ից 5.0մ հզորությամբ և կազմված է առանձին շերտերից, որոնք իրարից բաժանվում են գունավոր բրեկչիայի և տրավերտինի շերտերով: Օնիքսանման մարմարի շերտերի հզորությունը 0.20-ից 0.7մ է:

Ազլոմերատիվ տուֆը ունի համեմատաբար սահմանափակ տարածում: Դա բացվել է հորատանցքերով հանքավայրի կենտրոնական մասում: Հզորությունը տատանվում է 0.5-ից մինչև 2.5մ, հազվադեպ մինչև 3.5մ:

Մակրոսկոպիկ - դա ապար է միկրոփշրաքարային կառուցվածքով՝ կապված էֆուզիվ ապարների կլորացված մանր բեկորներից, կարբոնատ-տրավերտինային ցեմենտով:

Տրավերտին (նեոգեն) այս անվան տակ հասկացվում է յուրահատուկ երկրաբանական առաջացում, որը քիմիական տեսակետից բնութագրվում է կարբոնատային կազմով բարդ, տարբեր հորիզոններում ներկայանում է տարբեր կազմաբանա-ծագումային առանձնահատկություններով:

Ապարների բոլոր տարատեսակները անցումային տարբերություններով (ավազաքարերի և միկրոփշրաքարերի) կազմում են միասնական հաստաշերտ, որը վերնից սահմանափակվում է ժամանակակից ռելիեֆով, տեղ-տեղ ծածկված ավելի երիտասարդ նստվածքներով, ներքևից-գունավոր փշրաքարերի հաստաշերտով:

Տրավերտինի հաստաշերտը տարածական կապված է գունավոր փշրաքարի հաստաշերտի հետ: Այս երկու հաստաշերտերը երկու տեկտոնական խախտումներով բաժանվում են 3 բլոկների, ներքին, միջին, վերին: Այդ բլոկներում տրավերտինը հանդես է գալիս տարբեր կառուցվածքային սխեմաներով, ապարների ներառվածությամբ, հզորությամբ:

Ներքին բլոկում տրավերտինների հզորությունը խզվածքից դեպի հարավ փոքրանում է: Դա տեղի ունի նաև բլոկի միջին մասում:

Միջին բլոկը սահմանափակվում է հարավային և հյուսիսային խզվածքներով: Այստեղ տրավերտինի հզորությունը կախված է ապարների ջրալվացման և տեղադրման պայմաններից: Հյուսիսային խզվածքի պարկած կողում տրավերտինի հզորությունը հասնում է 55մ, իսկ հարավում աստիճանաբար նվազում է և սեպանում:

Կարբոնատային կազմի գորշ-դեղնավուն կավեր (նեոգեն) հանդիսանում են նստեցման-տեղակայման ընդհատման արդյունք: Չունեն տարածական զարգացում և հարթեցնում են գունավոր բրեկչիայի մակերևույթը առանձին դեպրեսիոն տեղամասերում:

Գունավոր փշրաքարը կազմում է միասնական շերտաձև հաստաշերտ, որը տեղաշարժվել է տեկտոնական խախտումների հետևանքով, մերկանում է տարբեր գիպսոմետրիկ նիշերում:

Գունավոր փշրաքարի հաստաշերտը հանքավայրի միջին մասում կազմում է ափսեաձև գոգավոր հանվածք սակավաթեք կողերով:

Գունավոր փշրաքարի հզորությունը տատանվում է լայն սահմաններում՝ 2.0-ից մինչև 35մ: Փշրաքարերում երբեմն դիտվում է շերտավորություն, որը պայմանավորված է դրանց մեջ օնիքսանման մասերի, տրավերտինի բարակ (1-2սմ) շերտիկների առկայությամբ: Դա վկայում է այն մասին, որ դրանց առաջացումը ուղեկցվել է տարբեր ջերմաստիճանի միներալային ջրերի գործունեությամբ:

Կարբոնատային կազմի գորշ-դեղնավուն կավեր և կավային ավազաքարերը, տեղադրվում են անմիջապես գունավոր փշրաքարերի տակ: Դրանք հավանաբար առաջացել են վերին օլիգոցենի և կարբոնատային ապարների ջրավազման և վերատեղակայման հաշվին:

Վերին օլիգոցենի գիպսատար կավերը և ավազաքարերը կազմում են հանքավայրի հիմքը: Դրանք մերկանում են անմիջապես երկրի մակերևույթում, հանքավայրի հարավ-արևմտյան և արևելյան մասերում:

Օգտակար հանածոյի որակական բնութագիրը

Օնիքսանման մարմար

Շնորհիվ իր ֆիզիկամեխանիկական և դեկորատիվ հատկանիշների օնիքսանման մարմարը լայնորեն օգտագործվում է որպես հումք մանրակերտության և ճարտարապետաշինարարական աշխատանքների համար:

Կատարված ուսումնասիրություններով հաստատվել է, որ օգտակար հանածոն ներկայանում է սպիտակ, մանրահատիկ, հազվադեպ թելային, տեղ-տեղ ծակոտկեն, շերտավոր ապարի տեսքով, շերտերի հաստությունը 1-2-ից 20մմ: Օնիքսանման մարմարի կարծրությունը ըստ ՄՕՄԻ սանդղակի հավասար է 3-ի, ջարդվածքը անհավասար է, փայլը ապակյա, լուսաթափանցելիությունը – 2սմ:

Այսպիսով Արտավազի հանքավայրի օնիքսանման մարմարը պիտանի է որպես հումք տարբեր մանրակերտերի և հուշանվերների համար:

Ուսումնասիրված օնիքսանման մարմարը բնութագրվում է նյութական կազմի համասեռությամբ: 136 նմուշների ուսումնասիրության տվյալներով Արտավազի

հանքավայրի օնիքսանման մարմարի ֆիզիկամեխանիկական հատկանիշները բնութագրվում են հետևյալ տվյալներով, որոնք բերված են աղյուսակում:

N	Ցուցանիշները	Չափ. միավ	Ցուցանիշների մեծությունը		
			Նվազագույնը	Առավելագույնը	Միջին
1.	Ծավալային զանգված	կգ/մ ³	2479	2707	2623
2.	Տեսակարար կշիռը	գ/սմ ³	2.69	2.79	2.74
3.	Ծակոտկենությունը	%	1.03	8.33	4.36
4.	Զրակլանելիությունը	%	0.17	1.41	0.61
5.	Փափկեցման գործակից	%	0.71	0.99	0.81
6.	Սառնակայունության գործակից	%	0.75	0.97	0.84
7.	Ամրության սահմանը	կգ/սմ ²			
	- չոր վիճակում	կգ/սմ ²	244	609	444
	- ջրհագեցած վիճակում	կգ/սմ ²	224	557	368
	- 25 փուլ սառեցուից հետո	կգ/սմ ²	200	461	288

Բերված տվյալները վկայում են, որ Արտավազի հանքավայրի օնիքսանման մարմարները պիտանի չեն որպես երեսապատման նյութ:

Տրավերտին

Մրանք մարնահատիկ, խիտ, տեղ-տեղ մանր ծակոտկեն, բաց դարչնա֊ույն ապարներ են, բարակ (1-2-ից – 10.-20մմ) հորիզոնական, երբեմն թեք սպիտակ մարմարի շերտիկներով և հազվադեպ կարբոնատների մանր, անկյունավոր բեկորներով, հիմնականում վարդագույն, ինչը տալիս է գեղեցիկ ֆակտուրա:

Ըստ ՀՄՍՀ-ի երկրաբանական վարչության կենտրոնական լաբորատորիայի տվյալների Արտավազդի հանքավայրի տրավերտինների քիմիական կազմը բերվում է աղյուսակում:

Պարունակությունները, %, %										
SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	TiO ₂	CaO	MgO	MnO	Na ₂ O	K ₂ O	Խոնավ.	ԿՇԺ
6.01	0.75	2.59	0.02	48.51	0.60	հետք	0.21	0.22	0.30	40.38

Տրավերտինների ֆիզիկամեխանիկական հատկանիշները որոշվել են ՀՄՍՀ-ի երկրաբանության վարչության ինժեներական երկրաբանության լաբորատորիայում: Ըստ 373 նմուշների ուսումնասիրության արդյունանքերի տրավերտինների ֆիզիկամեխանիկական հատկանիշները բնութագրվում են աղյուսակում բերված ցուցանիշներով:

N	Ցուցանիշները	Չափ. միավ	Ցուցանիշների մեծությունը		
			Նվազագույնը	Առավելագույնը	Միջին
1.	Ծավալային զանգված	կգ/մ ³	1976	2695	2512
2.	Տեսակարար կշիռը	գ/սմ ³	2.68	2.83	2.74
3.	Ծակոտկենությունը	%	3.49	28.3	8.19
4.	Ջրակլանելիությունը	%	0.45	5.50	1.70
5.	Փափկեցման գործակից	%	0.72	0.97	0.81
6.	Սառնակայունության գործակից	%	0.75	0.96	0.83
7.	Ամրության սահմանը	կգ/սմ ²			
	- չոր վիճակում	կգ/սմ ²	215	661	470
	- ջրհագեցած վիճակում	կգ/սմ ²	157	494	395
	- 25 փուլ սառեցուից հետո	կգ/սմ ²	135	456	341

Այսպիսով կատարված հետազոտություններից հետևում է, որ Արտավազի հանքավայրի տրավերտինների ֆիզիկամեխանիկական հատկանիշները լիովին բավարարում են ԳՈՍՏ 9479-69 պահանջները:

Բացի տեկտոնական խզվածքների հանքավայրի օգտակար հաստաշերտում կան բազմաթիվ ճեղքեր: Այդ ճեղքերի ուսումնասիրության նպատակով կատարվել է դրանց տեղադրման էլեմենտների չափումները փորվածքներում և բացահայտել: Այդ ճեղքերի ուսումնասիրության հետևանքով պարզվել է, որ հանքավայրում առկա են երկու ձևի ճեղքեր՝ հողմահարման և առանձնացման:

Հողմահարման ճեղքերն առաջացել են օգտակար շերտի մակերևութային փոփոխման արդյունքում: Այդ ճեղքերի դեպի խորք ձգվածությունը տատանվում է 0.1-ից 6.3մ: Սրանով է պայմանավորված «Փուշտա շերտի» առաջացումը: Առաջացման ճեղքերը առաջացել են տեկտոնական շարժերի արդյունքում, օգտակար շերտի ձևավորումից հետո:

Օգտավետ շերտից պիտանի բլոկների ելքի որոշման համար կատարվել է փորձնական արդյունահանում, որի հետևանքով որոշվել է բլոկների միջին ելք՝ տրավերտին՝ 32.2%, օնիքսանման մարմար՝ 31.9%:

Փորձնական հանույթի արդյունքով կարելի է նշել, որ տրավերտինից հնարավոր է ստանալ ցանկացած խմբի բլոկ:

Երեսապատման սալերի ելքը որոշելու համար 1969թ «Հայմարմար» կոմբինատում կատարվել է կոնդիցիոն բլոկների սղոցում, որից ստացվել է սալիկների տրավերտինից – $12.3\text{մ}^2/\text{մ}^3$, գունավոր բրեկչիայից – $12.2\text{մ}^2/\text{մ}^3$:

Փորձնական հանույթի սղոցման արդյունքներով կարելի է եզրակացնել.

- հանքավայրի տրավերտիններն ու բրեկչիաները հանդիսանում են ԳՈՍՏ 9479-76 պահանջները բավարարող բլոկների ստացման հումք:

- ինչպես տրավերտինների, այնպես էլ բրեկչիաներից ստացվում են 9980-69 ԳՈՍՏ-ին համապատասխանող սալեր:

- Օգտավետ շերտի թափոնները կարող են վերամշակվել մանրուքի և օգտագործվել դեկորատիվ սալերի արտադրության համար:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանները ուսումնասիրվել են երկրաբանահետախուզական աշխատանքներին զուգընթաց և հիմնականում ուղղված են եղել լեռնային փորվածքներում և հորատանցքերում գրունտային ջրերի առկայության ուսումնասիրությանը: Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ընթացքում ինչպես 1969թ., այնպես էլ 1976թ. հանքավայրի տարածքում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

Սարահարթը, որի վրա գտնվում է Արտավազի հանքավայրը, արևմուտքից, արևելքից և հարավից ռելիեֆային պայմաններով պաշտպանված է հոսող ջրերից, իսկ հանքավայրը կազմող ապարները (կավերը, փշրաքարերը և տրավերտինը) գործնականում անջրաթափանց են: Բացի այդ ապարների անկումը հյուսիսում խանգարում են գրունտային ջրերի ներթափանցմանը հանքավայրի սահմանները:

Պետք է նշել, որ Արարատյան հարթավայրի այս մասում գրունտային ջրերի մակարդակը շատ ցածր է: Բոլոր հորատանցքերը, որոնք հորատվել են մինչև 861-880մ նիշերը, այսինքն հանքավայրի ժամանակակից մակարդակից ավելի քան 45-91մ ցածր, անջուր են:

Տեխնիկական նպատակների համար կարելի է օգտագործել Արտաշատի ռոռզման ջրանցքի և Վեդի գետի ջրերը:

Պաշարների հաշվարկման ժամանակ հաշվի են առնվել ԳՈՍՍ 41-3-67 օնիքսանման մարմարների և ԳՈՍՍ 9471-69-տրավերտինի և գունավոր բրեկչիայի համար պահանջները ու կոնդիցիաների նախագծով որոշված պարամետրերը, ըստ որի օգտակար հանածոյի նվազագույն հզորությունը ընդունվում է 0.5մ օնիքսանման մարմարի և 1.0մ տրավերտինի և գունավոր բրեկչիայի համար մակաբացման ապարների և օգտակար հանածոյի հզորությունների առավելագույն գծային հարաբերությանը հաշվարկման մեջ մտած եզրային փորվածքներում – 0.3:1: պիտանի բլոկների էլքի նվազագույն տոկոսը – 11%:

Պաշարների հաշվարկման սահմանային թույլատրելի հորիզոնը -880մ:

Պաշարների հաշվարկը կատարվել է կոմբինացված եղանակով, հիմնականում ուղղաձիգ, զուգահեռ կտրվածքների մեթոդով, իսկ երկու բլոկների համար-երկրաբանական բլոկների մեթոդով: Մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առնվել՝ օգտակար հանածոյի մորֆոլոգիական, չափերը, տեղադրման պայմանները,

հետախուզման եղանակը և ռեխիեֆի բնույթը: Այդ բոլորը հաշվի առնելով օնիքսանման մարմարի պաշարները հաշվարկվել են 17 բլոկով, տրավերտինինը-35, գունավոր բրեկչիայինը-45 բլոկով:

ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի 1971թ. փետրվարի 3-ի N6154 արձանագրությամբ հաստատել է օնիքսանման մարմարի՝ որպես մանրակերտության, իսկ տրավերտինը և գունավոր բրեկչիան որպես հումք երեսապատման բլոկների և սալերի արտադրության համար, ներքին երեսապատման և մանրուք ստանալու նպատակով հետևյալ ծավալներով (հազ.մ³):

օնիքսանման մարմար-	B-176.5,	C ₁ -24.8,	
տրավերտին -	B-1826.4,	C ₁ -1516.3,	C ₂ -738.3,
գունավոր բրեկչիա -	B-1324.3,	C ₁ -3184.5,	C ₂ -1097.1,
օնիքսանման մարմար-	B-176.5,	C ₁ -24.8,	
տրավերտին -	B-1826.4,	C ₁ -1516.3,	C ₂ -738.3,
գունավոր բրեկչիա -	B-1324.3,	C ₁ -3184.5,	C ₂ -1097.1,

ԽՍՀՄ շինարարական նյութերի արդյունաբերության մինիստրության պաշարների կենտրոնական հանձնաժողովը, 1978թ. սեպտեմբերի 14-ի N85 արձանագրությամբ հաստատեց տրավերտինի և գունավոր բրեկչիաների պաշարները (նախկին հաստատվածի փոխարեն) 01.01.1978թ. դրությամբ հետևյալ ծավալներով (հազ.մ³):

տրավերտին	B-3051.7,	C ₁ -328.9,	C ₂ -738.3,
գունավոր բրեկչիա	B-3088.5,	C ₁ -2084.1,	C ₂ -1091.1,

Օնիքսանման մարմարը թողնվել է նույն հաստատված պաշարներով

$$B + C1 = 201.3 \text{ հազ.մ}^3$$

2.4 ՀՈՂԵՐԸ

Հողը բնական գոյացություն է, կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողառաջացնող գործաններն են աշխարհագրական, գեոմորֆոլոգիական,

կլիմայական պայմանները, լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհի և մարդու ներգործությունը:

Հանքավայրի տարածքը ներկայացված է լեռնաշագանակագույն հողերով, իսկ Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում ձևավորվել են մարգագետնային գորշ ոռոգելի, կիսաանապատային գորշ հողեր: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են հիդրոմորֆ սոդային աղուտ-ալկալի հողեր:

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմնահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ հասնում է 65-70սմ-ի:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալային մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով:

Անձակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացման պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:


Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5%:

Դրանց քիմիական հատկությունները հետևյալն են.

Հողի տիպը և ենթատիպը	Խորություն, սմ	Հումուս, %	CO ₂ , %	Կլանված գումարը, մ.էկվ. հողում	P ^H -ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Մարգագետնային գորշ հողեր	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

40

Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած

41

Բաց շագանակագույն մնացորդային կարբոնատային

47

Կիսաանապատային գորշ տիպիկ մնացորդային կարբոնատային

49

Կիսաանապատային գորշ տիպիկ բերվածքային

53

Ոռոգելի մնացորդային մարգագետնային գորշ խորը պրոֆիլային

58

Աղուտ-ալկալի մարգագետնային սողա-սուլֆատաքլորիդային

Հանքավայրի տարածքում տարածված են կիսաանապատային գորշ հողեր:

Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ոդոդաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրատեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%:

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Ստորև աղյուսակում ներկայացված են գորշ հողերի քիմիական հատկությունները:

Խորությունը, սմ	Հումուս, %	Ընդհանուր, %	CO ₂ , %	CaSO ₄ , %	Կլանված հումքերի գումարը, Մ.էկվ. 100գ հողում	P ^H -ը ջրային քաշվածքում
0-8	2.10	0.19	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	0.132	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	0.115	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	0.088	15.6	0.8	18.3	8.1
65-140	0.22	չի որոշված	2.2	42.1	չի որոշված	7.3

Բացահանքի հողերը ըստ նպատակային նշանակության գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայր:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Մակերեսը քարքարոտ է: Հողերը բնութագրվում են ցածր որակական հատկություններով

Հանքավայրը ընկերության կողմից շահագործվում է 2005թ-ից, ինչի արդյունքում հողածածկույթը բավականին մեծ մակերեսով խախտված է, հայցվող 8.67հա մակերեսով տեղամասի տարածքի հողերից 2.5հա մակերեսով տարածքում այն խախտված է:

2.5 ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԸ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Նրա տարածքով են անցնում Հրազդան գետն իր ստորին հոսանքով, իսկ Ազատ, Վեդի և Արածո գետը՝ ամբողջ ընթացքով՝ ակունքից գետաբերան: Մի քանի տասնյակ գետակներ էլ ամռանը բոլորովին ցամաքում են:

Գետերից միայն Արածո գետն է, որ իր ստորին հոսանքում անցնում է ՀՀ-ից դուրս: Մնացած գետերի ջրերն ամռանը լիարժեք օգտագործվում են ոռոգման կարիքների համար: Մնումը ձնհալքային, անձրևաջրային, վարարում են ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգման նպատակով Ազատ գետի վրա կառուցվել է համանուն

ջրամբարը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարն է Հորթուն բնակատեղիի մոտ:

Մարզում կառուցվել է Կախանովի և Արտաշատի ջրանցքները 19-20-րդ դարերում:

Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն.Ն.Կախանովի նախաձեռնությամբ դեռևս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Արագոսյանի (Երասխավան) կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թվականի նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36 կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թվականին:

Արտաշատի ջրանցքը կառուցվել է 1930 թվականին: Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երևանի տարածքում, ունի 61 կմ երկարություն: Վեղի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ագատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

Հանքավայրը ջրագուրկ է: Տարբեր ժամանակներում կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքների ընթացքում հանքավայրում ջրավորվածություն և ջրերի լճացում չի հայտնաբերվել:

Հանքավայրից ոչ հեռու (0.2-0.3կմ) անցնում է Արտաշատի ոռոգման ջրանցքը:

Բարձրադիր շրջանի ջրերը, հոսելով դեպի Արաքս գետի հովիտը, մուտք են գործում մուգ-կապտագույն լճային կավերի տակ և սնում արտեզյան ավազանները, իսկ մասամբ էլ, հոսելով բերվածքների մակերևույթով, առաջացնում են մեկուսացված ջրային ավազաններ և վերնաջրեր:

Շրջանը հարուստ է նաև հանքային աղբյուրներով, որոնք գտնվում են հանքավայրի սահմաններից դուրս, դեպի արևելք, Ուրցի լեռնաշղթայի հարավային

լանջերում: Այդ ջրերը նման են Ծղալտուրոյի հայտնի ջրերին և նրանց արդյունաբերական էլքը կազմում է 473.0լ/վրկ:

Շրջանի գետային ցանցը շատ թույլ է զարգացած: Շրջանի հիմնական գետային երակը համարվում է Արաքս գետը իր վտակ Վեղի գետով: Վեղի գետն իր ստորին հոսանքում ունի լայն գետահովիտ: Նրա էլքը նորմալ պայմաններում կազմում է 1-1.5լ/վրկ: Գետի ջրերը ամբողջովին բաժանվում են ռոտզման նպատակներով: Բացի դրանից, հանքավայրի հարավ-արևմտյան ծայրամասով անցնում է ռոտզման արհեստական ջրանցք:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աշխատակազմի «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկության, 2021թ-ի 4-րդ եռամսյակում Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մոնիթորինգի արդյունքները հետևյալն են.

Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում` 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակում:

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գառնի	1.79	2.95	61	2.15	3.07	70	2.01	3.04	66
Վեղի	Ուրցաձոր	0.25	0.51	49	0.33	0.72	46	0.48	0.72	67
Արփա	Ջերմուկ	1.86	2.75	68	2.02	2.66	76	1.94	2.58	75
Արփա	Արենի	4.98	7.30	68	7.27	8.11	90	8.16	7.55	108

Մակերևութային ջրերի որակ

Արարատյան ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 13 դիտակետում:

Վեղի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

2.6 ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Նյութը և մեթոդները

Հայցվող տարածքի բոլոր ուսումնասիրությունները կատարվել են դասական բուսաբանական և կենդանաբանական մեթոդներով: Դաշտային ուսումնասիրությունները իրականացվել են երթուղային մեթոդով, որի ժամանակ կատարվել են գրառումներ, որոշ դեպքերում հավաքվել է խոտաբույսերի հերբարիումներ, նկարահանվել են բույսերը և կենդանիները:

Հետազոտված տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել երկկենցաղներից՝ Փոփոխական դողոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դողոշ անունով: Այս տարածքում հանդիպող հավանական տեսակներից է նաև՝

- Փոքրասիական ճագարամուկը *Allactaga williamsi* Thomas, 1897,
- Անդրկովկասյան կուրամկնիկ *Ellobius lutescens* Thomas, 1897,
- Պարսկական ավազամուկ *Meriones persicus* (Blanford, 1875)

Դաշտային աշխատանքների ժամանակ տարածքում դիտարկվել են հետևյալ կենդանիները և/կամ դրանց կենսագործունեության հետքերը՝

- **Սողուններ՝**

Eremias strauchi Kessler, 1878- Շտրաուխի մողեսիկ

- **Թռչուններ**

Monticola solitarius (Linnaeus, 1758) - Կապույտ քարակեռնեխ

Oenanthe hispanica (Linnaeus, 1758) - Սևախայտ քարաթռչնակ

Passer domesticus - Տնային ճնճղուկ

- **Կաթնասուններ**

Lepus europaeus Pallas, 1778 - Գորշ նապաստակ

Microtus majori - Թփուտային դաշտամուկ

Vulpes vulpes - Սովորական աղվես

Արտավազդի հանքավայրի տրավերտինների արդյունահանման համար նախատեսված տարածքի բուսաբանական հետազոտումը կատարվել է 2020 թվականի սեպտեմբեր ամսին: Հետազոտվող տարածքը գտնվում է սովետական դարաշրջանում գոյություն ունեցած տրավերտինային հանքերի տարածքում, որի շրջակայքում այժմ էլ շահագործվում են մի շարք հանքավայրեր: Տարածքը իրենից ներկայացնում է կիսաանապատային չոր բուսականությամբ պատված տրավերտինների ելքեր, որտեղ հողի մակերեսի մեծ մասը զբաղեցնում են տրավերտինային ապարների մերկացումները: Այստեղ ուսումնասիրվել են բարձրակարգ անոթավոր բույսերի ֆլորան, բուսականությունը, հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ տեսակների առկայությունը, տեսակների նշանակությունը:

Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցությունն է՝ Օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) և Հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*) տեսակների գերակշռությամբ:

Բուսաաշխարհագրական առումով հետազոտվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Բացի ֆոնային տեսակներից, բնական կիսաանապատային բուսականությունը հարուստ է բարդաձաղկավորների այլ տեսակներով՝ *Helichrysum armenium* - Անթառամ հայկական, *Xeranthemum squarrosum* - Անմեռուկ չոված, *Chondrilla juncea* - Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (*Aegilops*

cylindrica - Այծակն գլանաձև, *Bromus japonica* – Յորնուկ ճապոնական, *Taeniatherum crinitum* - Երիզաքիստ երկարամազ, *Poa bulbosa* – Դաշտավունկ սոխուկավոր), Խաչածաղկավորներին պատկանող *Lepidium vesicarium* - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն: Ներկայումս այստեղ առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ հողի շուրջ 40-50% ծածկույթով: Թփերից գերակշռում է Դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasiana*) տեսակը:

Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, տարածաշրջանում գրանցված են մի շարք բուսատեսակներ, մասնավորապես՝

Օջան Օջեի (*Salsola aucheri*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Գազ Վեդու (*Astragalus vedicus*), լոբազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Օջան Թամամշյանի (*Salsola tamamschjanae*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Օջան թաղիքային (*Salsola tomentosa*), թելուկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Միկրոմերիա թփային (*Micromeria fruticosa*), շրթնազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Կնճիթաթերթիկ սապատավոր (*Rhinopetalum gibbosum*), շուշանազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Ցորեն արարատյան (*Triticum araraticum*), հացազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Տանձենի Ֆյոդորովի (*Pyrus theodorovi*), վարդազգիների ընտանիքին պատկանող, տանձենի ցեղի ծածկասերմ բույս:

Խոնդատ մերկացողուն (*Verbascum nudicaule*), խլածաղկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Կարմրան ութառեջ (*Tamarix octandra*), կարմրանազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ տերևաթափ թուփ:

Հոհենակերիա անցողուն (*Hohenackeria exscapa*), հովանոցավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Վարդաստեղիուկ Իլլինի (*Amberboa iljiniana* Grossh),

բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Տերեփուկ Արփայի (*Centaurea arpensis*), բարդածաղկավորների ընտանիքին

պատկանող ծածկասերմ բույս:

Խինձ գորովանի (լատ.՝ *Scorzonera gorovanica*), բարդածաղկավորների ընտանիքին

պատկանող ծածկասերմ բույս:

Նոնեա բազմագույն (լատ.՝ *Nonea polychroma*), գողտրիկազգիների ընտանիքին

պատկանող ծածկասերմ բույս:

Երեքօրնիկ պարսկական (*Hesperis persica*), խաչածաղկավորների ընտանիքին

պատկանող ծածկասերմ բույս:

Նրբախոտ թելատերև (*Leptaleum filifolium*), խաչածաղկավորների ընտանիքին

պատկանող ծածկասերմ բույս:

Կեղծանկաթաթիկ դիխոտոմիկ (*Pseudoanastatica dichotoma*),

խաչածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Մեխակ Քուռի (լատ.՝ *Dianthus cyri*), մեխակազգիների ընտանիքին պատկանող

ծածկասերմ բույս:

Բուն հանքավայրի տարածքում նշված բուսատեսակներից որևիցե մեկի աճելավայրի վերաբերյալ գրական տվյալներ չկան, դրանք չեն արձանագրվել նաև կատարված դաշտային տեղագնումների ժամանակ:

Բացահանքի տարածքից մոտավորապես 4-5կմ դեպի հարավ-արևելք տեղակայված է Գոռավանի ավազուտներ պետական արգելավայրը: Այս տարածքը հայտնի է բույսերի և կենդանիների տեսակային կազմի յուրահատկությամբ: Գրականությունից հայտնի այդ տարածքում հանդիպող կենդանատեսակներից են ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝

1. Դալի ավազամուկը (*Meriones dahli* Shidlovski, 1962),
2. լայնականջ ոզնի (*Hemiechinus auritus* (Gmelin, 1770)),
3. անապատային խածկտիկ (*Bucanetes githagineus* (Lichtenstein, 1823)),
4. մոնղոլական խածկտիկ (*Bucanetes mongolicus* (Swinhoe, 1870)),
5. միջերկրածովային կրիա (*Testudo graeca* Linnaeus, 1758),
6. անդրկովկասյան մողեսիկ (*Eremias pleskei* Nikolsky, 1905),

7. Հորվաթի կլորագլուխ մողես (*Phrynocephalus persicus* De Filippi, 1863),
8. երկարատու սցինկ (*Eumeces schneideri* (Daudin, 1802)):











Նկար. 5, 6. Հագարատերևուկ նեղատերև և Օշինդր բուրավետ



Նկար. 7. Կոտեն բշտիկավոր



Նկար. 8. Անմեռուկ չոված



Նկար. 9. Դժնիկ Պալլասի



Նկար. 10. Թխկի ամերիկյան



Նկար. 11. Կապար փշավոր



Նկար. 12. Հոտոտ արևելյան



Նկար. 13. Իշակաթնուկ Մարշալի



Նկար. 14. Երիզաքիստ երկարամազ



Նկար. 15. Խաղող մշակովի

Հետազոտվող տարածքի ֆլորայի կազմում գրանցվել են հետևյալ տեսակները
Աղյուսակ 1.

Plantae - ԲՈՒՅՍԵՐ

ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ

Aceraceae - Թխկազգիներ

Acer negundo L. - Թխկի հացենիատերև

Alliaceae - Սոխազգիներ

Allium atroviolaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն

Allium pseudoflavum Vved. - Սոխ կեղծ դեղին

Apiaceae - Հովանոցազգիներ

Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղազագար արևելյան

Asclepiadaceae - Թունաթափազգիներ

Cynanchum acutum L. - Շնախոտ սուր

Asteraceae - Բարդածաղկավորներ

Achillea tenuifolia Lam. - Հազարատերևուկ նեղատերև

Artemisia fragrans Willd. - Օշինդր բուրավետ

Centaurea diffusa Lam. - Տերեփուկ փռված

Chondrilla juncea L. - Խիժաճարճատուկ կնյունանման

Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական

Cousinia brachyptera DC. - Խոզանափուշ կարճաթև

Cousinia macroptera C. A. Mey. ex DC. - Խոզանափուշ խոշորաթև

Cymbolaena griffithii (A. Gray) Wagenitz - Ցիմնոլենա Գրիֆիտի

Helichrysum armenium DC. - Անթառամ հայկական

Tanacetum canescens DC. - Տարկավան, Լվածաղիկ ալեհեր

Xeranthemum squarrosum Boiss. - Անմեռուկ չոլած

Brassicaceae - Խաչածաղկավորներ

Alyssum desertorum Stapf. - Վառվռուկ անապատային

Alyssum muelleri Boiss. et Buhse - Վառվռուկ Մյուլլերի

Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծոսապաշար, Հովվամաղախ

Conringia orientalis (L.) Andr. - Կոնրինգիա արևելյան

Lepidium vesicarium L. - Կոստեմ բշտիկավոր

Capparaceae - Կապարազգիներ

Capparis spinosa L. - Կապար փշոտ

Caryophyllaceae - Մեխակազգիներ

Dianthus crinitus Smith - Մեխակ խավավոր

Queria hispanica L. - Քվերիա իսպանական

Chenopodiaceae - Թելուկազգիներ

Atriplex hastata L. - Թալ նիզականման

Ceratocarpus arenarius L. - Եզնաբզեզ ավազուտային

Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/

Halanthium rariflorum K. Koch - Աղածաղիկ նոսրածաղիկ

Halimocnemis sclerosperma (Pall.) C. A. Mey. - Հալիմոկնեմիս կարծրապտուղ

Noaea mucronata (Forssk.) Aschers. et Schweinf. - Նոեա սրածայր

Salsola dendroides Pall. - Օշան ծառանման

Salsola glauca Bieb. - Օշան թխակապույտ

Seidlitzia florida (Bieb.) Boiss. - Ջեյդլիցիա ծաղկավետ

Cistaceae - Խնգազգիներ

Helianthemum ledifolium (L.) Mill. - Արևանթեմ սովորական

Cuscutaceae - Գաղձազգիներ

Cuscuta cesattiana Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի

Dipsacaceae - Ակքանազգիներ

Scabiosa argentea L. - Քոսքսունկ արծաթագույն

Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ

Euphorbia helioscopia L. - Իշակաթնուկ արևատես

Euphorbia marschalliana Boiss. - Իշակաթնուկ Մարշալի

Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեզիերի

Fumariaceae - Ծխաբույսազգիներ

Fumaria vaillantii Loisel. - Ծխաբույս, Տերուկ Վայլանի

Geraniaceae - Խորդենազգիներ

Erodium cicutarium (L.) L'Her. - Ճայկտուց խնդամուկային

Lamiaceae - Շրթնաձաղկավորներ

Scutellaria orientalis L. - Սաղավարտուկ արևելյան

Stachys inflata Benth. - Աբեղախոտ փքված

Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր

Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի

Papaveraceae - Կակաչազգիներ

Glaucium corniculatum (L.) J. Rudolph - Թխակակաչ եղջերավոր

Peganaceae - Սպանդազգիներ

Peganum harmala L. - Սպանդ սովորական

Plumbaginaceae - Արձձախոտազգիներ

Acantholimon armenum Boiss. - Ոգնաթուփ հայկական

Acantholimon vedicum N. Mirz. - Ոգնաթուփ վեդու

Poaceae - Հացազգիներ

Aegilops cylindrica Host - Այծակն գլանաձև

Agropyron desertorum (Fisch. ex Link) Schult. - Սեզախոտ անապատային

Bothriochloa ischaemum (L.) Keng - Բոտրիոխոտ սովորական

Bromus japonicus Thunb. subsp. *japonicus* - Ցորնուկ ճապոնական

Cynodon dactylon (L.) Pers. - Արվանտակ մատնաձև

Dactylis glomerata L. - Ոգնախոտ հավաքված

Eremopyrum orientale (L.) Jaub. et Spach. - Անապատասեզ արևելյան

Helictotrichon armeniacum (Schischk.) Grossh. - Տիվարսակ հայկական

Hordeum murinum L. - Գարի մկնային

Phragmites australis (Cav.) Trin. ex Steud. - Եղեզ հարավային

Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ սոխուկավոր

Stipa arabica Trin. et Rupr. - Սմբուլ, Փետրախոտ արաբական

Taeniatherum crinitum (Schreb.) Nevski - Երիզաքիստ երկարամազ

Polygonaceae - Մատիտեղազգիներ

Atraphaxis spinosa L. - Փշամանդիկ փշավոր

Polygonum arenarium W. K. - Մատիտեղ ավազային

Ranunculaceae - Գորտնուկազգիներ

Ceratocephalus falcatus (L.) Pers. - Եղջրագլխիկ մանգաղանման

Clematis orientalis L. - Հոտոտ արևելյան

Resedaceae - Հափուկազգիներ

Reseda lutea L. - Հափուկ դեղին

Rhamnaceae - Դժնիկազգիներ

Rhamnus pallasii Fisch. et C.A. Mey. - Դժնիկ քաղցր

Rubiaceae - Տորոնազգիներ

Crucianella chlorostachys Fisch. et C. A. Mey. - Խաչախոտ կանաչահասկավոր

Scrophulariaceae - Խլածաղկազգիներ

Verbascum saccatum K. Koch - Խոնդատ պարկային

Thymelaeaceae - Գոճմակազգիներ

Diarthron vesiculosum (Fisch. et C. A. Mey.) C. A. Mey. - Երկհոդ բշտիկավոր

Vitaceae - Խաղողազգիներ

Vitis vinifera L. - Խաղող մշակովի

Zygophyllaceae - Զուգատերևազգիներ

Tribulus terrestris L. - Տատաշ փովող

Zygophyllum fabago L. - Զուգատերև սովորական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Իրականացված հետազոտությունների ընթացքում դիտարկվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:
- Նշված տարածքում բացակայում են Հայաստանի և այլ կարգավիճակի էնդեմ բուսատեսակները:
- Օգտակար բույսերը տարածքում թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով բավականին քիչ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թախտաջյան Ա.Լ., Ֆյոդորով Ան.Ա. Երևանի ֆլորան: Երևան, 1946.
2. Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010:

3. Флора Армении. Отв. ред. Тахтаджян А.Л., Т. 1-11. Ереван, Ругел-Лихтенштейн, 1954, 2009.
4. Черепанов С. К. Сосудистые растения России и сопредельных государств (в пределах бывшего СССР). С.-Петербург, 1995.
5. Աղաճյան Մ. Ս., Կլեմ Դ. Հայաստանի թռչունները: Դաշտային ուղեցույց: Հայաստանի ամերիկյան համալսարան, 2000 - 183 էջ
6. Հայաստանի Կենդանիների Կարմիր գիրք – 2010:
7. Arakelyan M., Danielyan F., Corti C., Sindaco R., Leviton A. Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh // Salt Lake City SSAR, USA, 2011: 154.
8. Dahl S.K. 1954. Zhivotnii mir Armyanskoi SSR [Animal Kingdom of Armenian SSR]. Vertebrates. Yerevan: 415 p (in Russian).

2.7 ՍԵՅՍՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արարատի մարզի Վեդի, Արարատ քաղաքների և հարակից տարածքներում կատարված սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքների արդյունքում գնահատվել են գրունտներում սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները.

0.4g-0.5 g

0.3g -0.4g

0.2g -0.3g:

